

«ՎՏԲ - Հայաստան Բանկ» ՓԲԸ Խորհրդի Որոշմամբ
«___» _____ 2016թ. թիվ _____ Արձանագրություն
«ՎՏԲ - Հայաստան Բանկ» ՓԲԸ Խորհրդի
տվյալ նիստին նախագահող՝

«ՎՏԲ - Հայաստան Բանկ» ՓԲԸ Խորհրդին

«ՎՏԲ - Հայաստան Բանկ» ՓԲԸ Ներքին աուդիտի դեպարտամենտի եզրակացությունը
2015թ-ի ընթացքում «ՎՏԲ - Հայաստան Բանկ» ՓԲԸ ներքին հսկողության համակարգի ՀՀ կենտրոնական բանկի
կողմից սահմանված ներքին հսկողության նվազագույն պահանջներին համապատասխանության վերաբերյալ

«ՎՏԲ - Հայաստան Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) Ներքին աուդիտի դեպարտամենտի կողմից 2015թ-ի ընթացքում և
31.12.2015թ-ի դրությամբ իրականացվել են Բանկի ներքին հսկողության համակարգի ՀՀ կենտրոնական բանկի
կողմից սահմանված նվազագույն պահանջներին համապատասխանության գնահատմանն ուղղված ստուգումներ:

Ստուգումներն իրականացվել են մեր կողմից, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների: Մենք հանդիման
ենք, որ մեր կողմից իրականացված աուդիտը կարող է հիմք հանդիսանալ Բանկի ներքին հսկողության համակարգի
ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն պահանջներին համապատասխանության վերաբերյալ
եզրակացության համար:

Բանկի ներքին հսկողության համակարգի ստուգումները ներառել են, բայց չեն սահմանափակվել.

- Բանկի նորմատիվային բազայի բավարարության և գործող օրենսդրության պահանջներին վերջինիս
համապատասխանության գնահատումը,
- Բանկի ղեկավարների և աշխատակիցների իրավասությունների փոխանցման և կառուցվածքային
ստորաբաժանումների միջև իրավասությունների բաշխման համակարգերի վերլուծությունը,
- գործարքների իրականացման և հաշվետվությունների ձևավորման ընթացքում Բանկում/մասնաճյուղերում
հսկողության և ռիսկերի գնահատման համակարգերի առկայության և համարժեքության, ինչպես նաև
տեղեկատվական համակարգերի ապահովության գնահատումը,
- Բանկի ստորաբաժանումների միջև տեղեկատվության փոխանակման ընթացակարգի ուսումնասիրությունը,
- Բանկի ստորաբաժանումների կողմից, Ներքին աուդիտի դեպարտամենտի ստուգումների արդյունքներով
արձանագրված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների ստուգումը և դրանց բավարարության
վերլուծությունը,
- ՀՀ կենտրոնական բանկի և այլ իրավասու մարմինների կողմից Բանկում իրականացված ստուգումների
արդյունքների վերլուծությունը, ինչպես նաև, արձանագրված թերությունների վերացմանն ուղղված Բանկի
ստորաբաժանումների կողմից իրականացվող միջոցառումների ստուգումը և դրանց բավարարության
վերլուծությունը:

Բանկի ներքին հսկողության համակարգում (մասնավորապես, կառավարման համակարգում, ստորաբաժանումների
ֆունկցիոնալ կանոնակարգերում, վարկավորման գործընթացում, հաշվառման համակարգում) Արտաքին աուդիտի,
ՀՀ կենտրոնական բանկի և Ներքին աուդիտի դեպարտամենտի կողմից հայտնաբերված ներքին հսկողության
նվազագույն պահանջներին անհամապատասխանությունները 2015թ-ի ընթացքում իրականացված
միջոցառումների արդյունքում վերացվել են կամ գտնվում են կարգավորման փուլում:

Մեր կարծիքով, 31.12.2015թ-ի դրությամբ Բանկի ներքին հսկողության համակարգը ընդհանուր առմամբ
համապատասխանում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված ներքին հսկողության նվազագույն
պահանջներին:

«ՎՏԲ - Հայաստան Բանկ» ՓԲԸ
Ներքին աուդիտի դեպարտամենտի տնօրեն
Բ. Երևան
04 ապրիլի 2016թ.

 Ա. Բեգլարյան

Հավանություն է տրվել
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ Խորհրդին կից
Աուդիտի կոմիտեի _____ թ-ի թիվ _____ Արձանագրությամբ